ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

31 հունվար 2025թ.

«Սուջյանս» ՍՊԸ -Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ Լ.Սուջյանին

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Ն ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/5
ծածկագրով
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Սուջյան՝

«Սուջյանս» ՍՊԸ-ի և Արթիկի համայնքապետարանի միջև կնքվել է «17 հունվարի 2025թ-ի ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/5 ծածկագրով պայմանագիր, որի շրջանակում պետք է մատակարարվեր պայմանգրի 1-ին չափաբաժնով նախատեսված սննդամթերքը/հաց/ :

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար սննդամթերքի ձեռք բերման՝ /հաց/:

Տեղեկացնում ենք, որ պայմանագրի տեխնիկական բնութագիր վճարման ժամանակցույցի թիվ 2 հավելվածի /ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/5 ծածկարով 1-ին չափաբաժնի մեջ նշված հացը սահմանված ժամկետներում պայմանագրով ստանձնած պարտավորություններից հրաժարվել է չմատակարարելով վերը նշված ապրանքը /հաց/: Հայտնում ենք Ձեզ, որ ընկերության կողմից չեն պահպանվում պայմանագրով ստանձնած ապրանքի ձեռք բերման՝ մատակարարման ժամկետները: Պայմանագրի 2.1.7 կետի (բ) ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի և ամբողջովին լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագրի դրույթներն.

2.1.1 հրաժարվել է պայմանագրով ստանձնած ապրանքների մատակարարումը:

Հիմք ընդունելով <<Սուջյանս>>ՍՊԸ-ի 31.01,.25թ-ի գրությունը այն մասին, որ խնդրել է պատվիրատուի ղեկավարին, որ պայմանագիրը լուծել հրաժարվելուվ վերը նշված ապրանքների մատակարարումից տեխնիկական պատճառներով: Ինչպես նաև հրաժարվել է պայմանագրով ստանձնած և իր կողմից հաստատված տուժանքի ձևով որակի և պայմանագրի ապահովումների գումարները փոխանցել Արթիկի համայնքապետարանի բյուջեի հաշվին նաև <<Սուջյանս>>ՍՊԸ-ն գրությունով հավաստել է, որ <<Սուջյանս>>ՍՊԸ-ին սպասարկող <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ի հաշվին չունի բավարար գումար: Պատվիրատուն միակողմանի և ամբողջովին լուծում է ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/5 ծածկագրով 1-ին չափաբաժնով՝ նախատեսված սննդամթերքների ձեռքբերման /հաց/: Պայմանագիրը համարելով լուծված ընդհանուր 12343999.20 (տասներկու միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր իննսունինը քսան լումա/ ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:Ընդ որում,գնումների գոծընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում

ներառվելը,դրանում գտնվելու ժամանակահատվածում,ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի և ամբողջովին լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի,պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով <<Սուջյանս>>ՍՊԸ –ն հրաժարվում է պայմանագրով չափապաժին 1-ի (Հավելված 3.2) սահմանված որակավորման պայմանագրի 1236746 /մեկ միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր քառասունվեց / ՀՀ դրամը և (Հավելված 4.1) սահմանված որակավորման ապահովման 1855119 /մեկ միլիոն ութ հարյուր հիսուհինգ հազար մեկ հարյուր տասնինը / ՀՀ դրամ գումարները ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի բյուջեի 900205101109 հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները և վճարման պահանջագրերը չի ուղարկելու Արթիկի համայնքապետարաի artik.gnumner.am էլ. հասցեին: Միաժամանակ տեղեկացնում ենք ,որ <<Սուջյանս>> սահմանափակ պատասխանատու ընկերությանը կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ տեղեկացնում ենք,որ Ձեր կազմակերպությանը կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Ընդ որում եթե՝

- սույն կետով նախատեսված՝լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի,պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի,պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնի որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո,բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը,ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին,որի հիման վրա մասնակիցը չի ներառվում գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ոսկանյան

Կատարող՝ գնումների համակարգող
Ղևոնդ Գրիգորյան